01/10.1/5168-09
2009-07-31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ 2008 թվականից սկսած գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններն իրենց ոլորտների բյուջետային հայտերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնում են նաև ծրագրային բյուջետավորման ձևաչափով, որն ըստ էության ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի հետ միաժամանակ սահմանում է նաև ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող քանակական և որակական ցուցանիշներ:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում, օրենքի գործողությունը լավագույն դեպքում կարող է տարածվել 2011 թվականի բյուջետային գործընթացի վրա և չի արտացոլի 2009-2010 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայումս իրականացվող բարեփոխումները ծրագրային բյուջետավորման ներդրման բնագավառում: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է ծրագրային բյուջետավորման ներդրմանը և պետական ու տարածքային կառավարման

մարմիններում աշխատանքային ծրագրերի կատարողականի գնահատման համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումներ, անհրաժեշտ ենք համարում օրենսդրական դաշտը վերափոխել այդ բարեփոխումների ընթացքին և բովանդակությանը համահունչ։

Բացի դրանից, իրավական առումով՝

1. 1-ին հոդվածի՝

1) «թիվ-137-ՀՆ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-137» բառով.

2) «կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջները։

2. Հստակեցման կարիք ունի «օրինագծեր» հասկացությունը։ Այստեղ խոսքը պետք է գնա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող օրենքների նախագծերի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առայժմ աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պավել Սաֆարյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-657-01.07.2009-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

***Հոդված** 1.* «ՀՀ բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի թիվ-137- ՀՆ օրենքի /այսուհետ՝ օրենք/ 6-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամ.

«2. բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության եւ ըստ ոլորտների մշակված տարեկան ծրագրերին ինչպես նաեւ համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան։ Տարեկան ծրագիրը պետական բյուջեի բաղկացուցիչ մասն է։ Տարեկան ծրագիրը ներառում է՝

ա/ ծրագրի հիմնական խնդիրները,

բ/ նախատեսված աշխատանքների ծավալները եւ իրականացման ժամանակացույցը,

գ/ նախատեսված աշխատանքների ֆինանսավորման համամասնությունները,

դ/ ծրագրի կատարման սկզբունքները եւ նախատեսված աշխատանքների իրականացման առաջնահերթությունները,

ե/ նախատեսված աշխատանքների իրականացման եւ դրանց ֆինանսավորման /այդ թվում օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված օգնությունների հաշվին/ գործընթացի վերահսկողության կարգը,

զ/ այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի համակողմանի ներկայացման համար։

Տարեկան ծրագրի հետ կառավարությունն Ազգային Ժողով է ներկայացնում դրա կատարումն ապահովող օրինագծերը։

Տարեկան ծրագրի կատարման մասին հաշվետվությունը հերթական տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մասն է»։

***Հոդված** 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է պետական բյուջեի կազմավորման գործընթացում տարեկան կտրվածքով ծրագրային մոտեցումը ամրագրելու անհրաժեշտությամբ: Այդօրինակ մոտեցում ամրագրված է, մասնավորապես, «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում /Հոդված 41, 42 եւ 43/, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում /Հոդված 33, 34 եւ 35/ եւ «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքում /Հոդված 12, 13 եւ 14/: